



Ռաֆֆի

Շուշան

Շուշան, նստե՛, կարող կարի՛,
Հերիք այդքան ծուլանաս,
Այդ անհիծված լուսամուտեն
Ե՞րբ պիտի դու հեռանաս:

Ասաց մայրը բարկանալով
Մանկահասակ աղջկան,
Որ կանգնած էր, լուսամուտեն
Մտիկ կըտար դեպ շուկան:

Իսկ Շուշանը տհաճությամբ
Եկավ յուր տեղը նստեցավ,
Նորա դեմքը խիստ տխուր էր,
Եվ սրտումն ուներ ցավ:

Հանկարծ դրսեն անցնող կառքը
Սաստիկ ձայնով որոտաց,
Եվ Շուշանը կրկին վազեց,
Փակ լուսամուտն արեց բաց:

Աղջի՛, նստի՛, կարող կարի,
Հերի՛ք նայես դու շուկան,
Այս առավոտ դու չես գործել,
Օրից անց է երեք ժամ:

Ամա՛ն, մայրի՛կ, հոգուդ մատաղ,
Աղջիկն ասաց քնքշաբար,
Ա՛յս բոպեիս, ա՛յս բոպեիս
Կրվերջացնեմ ես իմ կար:

Բայց նա տեսավ, որ անցնողն
Էր մի ծերուկ չինովնիկ,
Դենքը խոժոռեց, տեղը դարձավ,
Հետքից կնքեց յուր մըճիկ⁴

Առեց գործը, բայց էր տաղտուկ
Չէր ախորժում կար կարել,
Նորա սիրտը վրդովված էր,
Նա չէր կարում համբերել:

Կրկին անգամ կառքի ձայնը
Հնչեց նորա ականջին,
Վազեց Շուշանը դեպ լուսամուտ,
Ուխտյալ տեղումն առաջին:

Աղջի՛, Էլի՞ դու գնացիր,
Ա՛յս, աներես, անամոթ,
Ինչո՞ւ այսօր դու գըժվել ես,
Չես գործում այս առավոտ:

Մայրի՛կ, մայրի՛կ, հոգուդ մատաղ,
Մի բարկացիր իմ վերա,
Այս բոպեիս, այս բոպեիս,
Ես կըկարեմ իմ կարը:

Նայեց Շուշան, մի աֆիցեր
Անց էր կենում յուր կառքով,
Գեղեցիկ էր, մանկահասակ,
Թեքված կողքին շնորհքով:

Աղջի՛, արի՛, կարբդ կարի,
Հերի՛ք շուկան մտիկ տաս,
Հիմա կըգա վարժապետդ,
Դու չես սերտել դեռ քո դաս:

Բայց աղջիկն էլ չըլսեց,
Թե ինչ խոսեց նորա մայր,
Ջեհիլ տղան կրակ վառեց
Նորա սրտումն անմար:

Երկար այնպես աչքը ձգած
Մտիկ կաներ մեր Շուշան,
Մինչ պատանին շարժեց ձեռքով՝
Բազմախորհուրդ մի նշան...